

Կ Ա Ր Ծ Ի Ք

**ԼՈՒՍԻՆԵ ՀԱՄԱԶԱՍՊԻ ԾՊՆԵՑՅԱՆԻ <<< ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ>> ԹԵՄԱՅՈՎ
ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.02
<<ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԿԱՌԱՎԱՐՈՒՄ>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ**

Հայաստանի Հանրապետության տնտեսության կարևոր ոլորտներից է հանդիսանում գյուղատնտեսությունը, որն ունի ոչ միայն տնտեսական, այլ նաև սոցիալական կարևոր նշանակություն: Այն ապահովում է զբաղվածության որոշակի մակարդակ հատկապես գյուղական բնակավայրերում, որտեղ գործազրկության մակարդակը բարձր է, իսկ սոցիալական խնդիրներն՝ առավել ցայտուն արտահայտված: Ունենալով զարգացման համար որոշակի պայմաններ, գյուղատնտեսության ոլորտը միաժամանակ բախվում է մի շարք հիմնախնդիրների հետ, որոնք սահմանափակում, ինչ-որ տեղ նաև խոչընդոտում են վերջինիս զարգացմանը: Անշուշտ, դրանց լուծման գործում կարևոր մասնակցություն կարող է ունենալ պետությունը՝ այդ ուղղությամբ կիրառելով կարգավորման համապատասխան լծակներ ու գործիքներ:

Հարկ է նշել, որ ներկա պայմաններում խիստ կարևորվում է գյուղատնտեսության մրցունակության ապահովումը, որը բնութագրում է տվյալ ոլորտի զարգացման մակարդակը և պայմանավորում է երկրի դիրքերը միջազգային շուկայում: Այն հնարավորություն է տալիս նախադրյալներ ստեղծել տնտեսական և սոցիալական տարբեր խնդիրների արդյունավետ լուծման համար, ապահովել գյուղատնտեսական արտադրանքի իրացման բարենպաստ պայմաններ, ձևավորել սպառողական նախապատվություններ և զբաղեցնել

ավելի շահեկան դիրքեր շուկայում: Ակնհայտ է, որ գյուղատնտեսության ոլորտի մրցունակության բարձրացման հիմնախնդիրների բացահայտման և լուծման արդյունավետ ուղիների մշակման առումով պետք է խիստ կարևորել գիտական ուսումնասիրությունների իրականացումը, ինչին էլ նվիրված է սույն ատենախոսությունը: Այս հանգամանքն, ակնհայտորեն, խոսում է ընտրված թեմայի **արդիականության և հրատապության** մասին:

Աշխատանքն ունի տրամաբանական կառուցվածք, որում իրականացված ուսումնասիրությունները հեղինակին թույլ են տվել հիմնավորել թեմայի կարևորությունը, բացահայտել տվյալ ոլորտի առանձնահատկությունները և մշակել դրանցով պայմանավորված տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները:

Ներածությունում հիմնավորված են հետազոտության արդիականությունը և ստացված արդյունքների գործնական ներդրման հրատապությունը, դրված է հետազոտության նպատակը և բացահայտված են դրան հասնելու հիմնական ուղիները:

Ատենախոսության **առաջին՝ <Գյուղատնտեսության մրցունակության տեսամեթոդաբանական հիմքերը>>** գլխում ուսումնասիրվել են գյուղատնտեսության մրցունակության էությունը, այն պայմանավորող գործոնները, մրցունակության գնահատման չափանիշները, ցուցանիշները և մեթոդները, ինչպես նաև քննարկվել են գյուղատնտեսության մրցունակության բարձրացմանն ուղղված պետական քաղաքականության հնարավորությունները:

<Ետազոտության **երկրորդ՝ <<< Գյուղատնտեսության մրցունակության արդի վիճակը, դրա բարելավման քաղաքականության կադրելագործման հիմնախնդիրները>>** գլխում ուսումնասիրվել է գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության միջազգային փորձը, վերլուծության են ենթարկվել հանրապետությունում գյուղատնտեսության մրցունակությունը բնութագրող ցուցանիշները, գնահատվել է դրանց վրա

պետական քաղաքականության ազդեցությունը և բացահայտվել են այդ ուղղությամբ առկա հիմնախնդիրները:

Աշխատանքի **երրորդ**՝ <<<< **գյուղատնտեսության մրցունակության բարձրացման առաջարկվող քաղաքականության հիմնական ուղղությունները**>> գլխում տրվել է << գյուղատնտեսության մրցունակությունը պայմանավորող գործոնների ազդեցության քանակական գնահատականը, մշակվել են մրցունակության բարձրացման քաղաքականության ուղղությունները և գնահատվել է դրանց արդյունավետությունը:

Հետազոտության արդյունքների **հավաստիությունը** պայմանավորված է այն հանգամանքով, որ աշխատանքում մշակված մոտեցումները և արված առաջարկությունները հիմնված են քննարկվող հիմնահարցը ուսումնասիրող հայտնի մասնագետների աշխատությունների վրա, իսկ որպես տեղեկատվական հիմք ծառայել են այդ բնագավառին վերաբերող պաշտոնական և վիճակագրական նյութերն ու տվյալները: Ատենախոսությունում օգտագործված են վերլուծության ժամանակակից մեթոդներ, որոնք, ակնհայտորեն, բարձրացրել են ստացված արդյունքների հավաստիության աստիճանը:

Աշխատության **գիտական նորույթը** կայանում է նրանում, որ գնահատվել է << գյուղատնտեսության ներքին մրցունակության մակարդակը, բացահայտվել է այն բնութագրող առանձին արդյունքային հատկանիշների և ճյուղային բյուջետային հատկացումների միջև քանակական կապը, դրանց վրա տարբեր գործոնների ազդեցությունը, մշակվել են << գյուղատնտեսության մրցունակության բարձրացման հիմնական ուղիները:

Հեղինակի կողմից մշակված մեթոդաբանական ու մեթոդական մոտեցումներն, արված առաջարկություններն ու ընդհանրացումներն ունեն **տեսական և գործնական** նշանակություն: Դրանք կարող են լայնորեն օգտագործվել տնտեսական կառավարման տարբեր մակարդակներում, դառնալ ինչպես ամբողջ տնտեսության, այնպես էլ նրա առանձին ոլորտների հետագա զարգացումը պայմանավորող խթանիչ տեղաշարժերի բացահայտման, դրանց

ճիշտ նպատակաուղղման և տնտեսական կայուն աճի համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծման արդյունավետ գործիք: Հետազոտության արդյունքների գիտագործնական կիրառության շրջանակները բավականին լայն են և ուշադրության արժանի:

Ատենախոսությունը զերծ է **դիպոդություններից**, որոնցից հատկանշական են հետևյալները.

1. ՀՀ գյուղատնտեսության ոլորտի մրցունակության բարձրացմանն ուղղված պետական քաղաքականության կատարելագործման համատեքստում հեղինակը կարևոր դեր է վերապահում պետական ուղղակի աջակցության շրջանակների ընդլայնմանը: Համաձայն լինելով առաջարկվող մոտեցման հետ, միևնույն ժամանակ, կարծում ենք, որ ոչ պակաս կարևոր նշանակություն ունի աջակցության ձևերի կատարելագործումը՝ հատկապես դրանց հասցեականության և արդյունավետության բարձրացման տեսանկյունից: Նշված հարցերը, մեր կարծիքով, արժանի էին առավել խորը ուսումնասիրության:

2. Հանրապետությունում գյուղատնտեսության ոլորտն, ըստ էության, դուրս է մնում հարկման դաշտից՝ ոլորտին տրամադրված հարկային արտոնությունների հետևանքով: Կարծում ենք, աշխատանքն էականորեն կշահեր, եթե հեղինակը գնահատեր տվյալ հարկային արտոնության արդյունավետությունը, դրա ազդեցությունը ոլորտի զարգացման վրա, ինչպես նաև առաջիկայում գյուղատնտեսության հարկման հեռանկարները հանրապետությունում՝ հաշվի առնելով տրամադրված հարկային արտոնության ժամկետայնությունը:

3. Ատենախոսությունում ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացմանն ուղղված պետական քաղաքականության շրջանակներում առաջարկվող ծրագրերի զգալի մասը ենթադրում է ֆինանսական զգալի միջոցներ: Աշխատանքի գիտագործնական նշանակությունը զգալիորեն կբարձրանար, եթե հեղինակի կողմից տրվեր առաջարկվող ծրագրերի ֆինանսական գնահատականը՝ դրանց իրականացման իրատեսականության վերաբերյալ արժանահավատ պատկերացումներ ձևավորելու համար:

4. Ցանկացած ապրանքի՝ այդ թվում նաև գյուղատնտեսական արտադրանքի մրցունակության բարձրացման գործում կարևոր նշանակություն ունի գինը, ինչն էլ, իր հերթին, այլ գործոնների հետ միասին, անդրադառնում է տվյալ ոլորտի մրցունակության վրա: Հետևաբար, գյուղատնտեսության մրցունակության բարձրացման խնդիրները քննարկելիս հեղինակը պետք է առավել մեծ ուշադրության դարձներ տվյալ ոլորտում գնագոյացման մեխանիզմի վրա՝ մրցունակ գներ ունենալու ուղղությամբ համապատասխան մոտեցումներ մշակելու նպատակով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները չեն նսեմացնում հետազոտության արդյունքները: Դրանք հետապնդում են ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացմանը նվիրված հետագա ուսումնասիրությունների ուղղությունների բացահայտման նպատակ:


Լ. Ծպնեցյանի թեկնածուական ատենախոսությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն, ամբողջական և արժեքավոր հետազոտություն, որում դրված և լուծված են հանրապետության համար կարևոր ու արդիական խնդիրներ:

Հեղինակի մասնագիտական ու վերլուծական մակարդակն, ակնհայտորեն, բարձր է, ինչի մասին են վկայում ինչպես ատենախոսությունը, այնպես էլ դրանում ստացված արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են լայնորեն օգտագործվել գյուղատնտեսության զարգացման ծրագրերի իրականացման ընթացքում:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Լ. Ծպնեցյանի ««ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղությունները»» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ««Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի»» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ«
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
13.09.2024թ.



Վ. ԲՈՍԱՆՋՅԱՆ

Պարոն Վ. ԲՈՍԱՆՋՅԱՆԻ
ստորագրությունը հաստատում եմ՝
բ. գ. թ.
ԵՊՀ գիտական քարտուղար



Մ. ԿՈՎՎԱՆՆԻՍՅԱՆ

13.09.2024թ.